«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝
«Փյունիկ ՖԱ» ՀԿ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcpyunik.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19.11.2024թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Հենրիկ Խաչատրյան
	Դավիթ Բակլաչյան
	Արփի Լազարյան
	Նարեկ Ադամյան

Վարույթ՝	Կ-018
Խախտում՝	«Փյունիկ ՖԱ» ՀԿ Տնօրենների խորհրդի նախագահ Արթուր Սողոմոնյանի կողմից՝ պատշաճ վարքագծի հիմնական կանոնները խախտելը (Հոդված 9, 1-ին կետ Հոդված 9, 2-րդ կետ, 1.2 ենթակետ և 1.4 ենթակետ)

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

Ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 4-րդ հոդվածի 1-ին կետի 1.8 ենթակետով՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ Տնօրենների խորհրդի նախագահ Արթուր Սողոմոնյանի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել մարզադաշտ մուտք գործելու արգելք՝ 1 տարի ժամկետով: Պատասխանատվության միջոցը տարածվում է խախտման կատարման պահից՝ 2024 թվականի հոկտեմբերի 2-ից սկսած:

Հրահանգ՝ համաձայն ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2024թ. խմբագրություն) 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետի

1. Պատասխանատվության միջոցը տարածվում է ՀՖՖ հովանու ներքո անցկացվող մանկապատանեկան ֆուտբոլի առաջնությունների հանդիպումների վրա:
2. Կարգապահական խախտման արդյունքում առաջացած հետևանքները շտկելու և հետագայում նմանատիպ ոչ սպորտային վարքագիծը բացառելու նպատակով հանդես գալ հրապարակային զղջման խոսքով՝ որոշման հրապարակման պահից հետո 15-օրյա ժամկետում:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: